Դաւիթն օր իմցաւ Զմկեր սուլթանի ախչիկն էր, ըսեց.
—Էդ իմ սերմն էր, օր ինձ սպանեց[1]:

Դաւթին վերցուցին ու էկան:

Ցռան-Վէգոն առէջ էկաւ. էկաւ, Խանդութ խանումին ըսեց թէ՝—Խանդութ խանում, Դաւիթ մեռաւ, ես քըզի անուշ:

Խանդութ խանում օր սպանելու ձէն լսեց, ինք լէ վերևանց թալեց ցած ու ընկաւ, մեռաւ:

Դաւիթն առան, էկան. բերին, հասուցին էդ տեղ. էկան, տեսան, օր Խանդութ խաթուն ընկեր է ու մեռեր:

Քեռի-Թորոսիկ ըսեց.—Էդ ո՞րն ըսեց, օր զինք թալեց ցած, մեռաւ:

Ըսին թէ՝—Ցռան-Վէգոն ըսեց:

Ըսեց.—Ցո՞ռի չ'սըբրար, չուր գէնք հարցուցէնք՝ էրեխայ էղե՞ր ա, չ'էղեր ա:

Գացին, տեսան, օր ծծերուց կաթ կ'իգայ, ըսին.—Օր հմալ է, էղեր ա:

Բերին էրկուս լէ պատընքեցին ու տարան, հորեցին:

Եօթն օր սուգ կապեցին:

Քեռի-Թորոսիկ խանչեց ուր տղեկներ.—Էրթանք, առնենք մեր տղէն, գանք:

Ու Քեռի-Թորոսիկ, Ցռան-Վէգոն, Փոքրիկ-ճնճղիկ, Խոր-Մա-

---

[1]) Բ. վարիանտի մէջ Դաւթի մահը այսպէս է պատմուած. Դաւիթ իւր քեռու՝ Զինով-Ցովանի որդու հարսանիքն էր գնացել երդուելով կնոջը՝ քառասուն օրից յետոյ անպատճառ վերադառնալ. երդուելիս սխալմամբ ձեռքը, փոխանակ սանրի, խաչ պատարագի վերայ էր դրել: Սուլթան-Գրմիժ թունաւորած նետ ուանեղով սպանում է Դաւթին, երբ վերադարձին պիտի անցնէր Մեղրագետի կամրջով: Քուռկէ-Ջալալին Դաւթի դիակը բերանով մինչև Սասուն է տանում: